

Հայաստանի Հանրապետության  
Սփիւոֆի Նախարարության  
Նախարար՝  
Ազնուաշուֆ՝  
Տիկին Հրանոյշ Յակոբյան  
Երևան

Այսու կը հաստատենք, որ Յունիսի 10-ին Հ.Հ. Լոս Անջելեսի Հիւպատոսութեան թղթատարով, ստացած ենք պատկանելի նախարարութեանդ կողմէ մեզի շնորհուած 16 Փետրուարի 2010 թուակիր, թիւ 036-10 ՊԱՏՈՒՅՑ ԳԻՐը «Հայ Լեզուի Օր»ուան առիթով:

Կը յայտնենք, որ խորապէս պատուուած կը զգանք:

Մեզի այնպէս թուեցաւ, որ Դուք խտացուցած էիք հազարաւոր աշակերտ-աշակերտուհիներու շնորհակալ զգացումն ու սէրը մայրենի լեզուին նկատմամբ:

58 տարիներու մեր ծառայութեանը ընթացքին՝ իրրեւ Տնօրէնի կամ դասղեկի, միշտ բաւարարութիւն ստացած ենք դասաւանդելու մայրենի լեզու, գրականութիւն, պատմութեան առարկաներ, որոնք առիթ եւ միջոց եղած են մեզի, մեր ժողովուրդի ընտիր զաւակներուն եւ դէմքերու ստեղծագործութեանց եւ գործերուն հետ հոգեպէս ապրելու եւ զանոնք հաղորդակցութեան մէջ դնելու հասնող սերունդներուն հետ:

Շնորհակալութիւն՝ մեր հայրենի պատուարժան կառավարութեան եւ զայն գլխաւորող Վսեմաշուֆ Նախագահին, որուն առաջադրանքով օգտաշատ այս նախարարութիւնը կայացած՝ կը թուի թէ գործնապէս կը դառնայ երազուած միութեան կապն ու օղակը մրրկաւ բաժնուած մեր ժողովուրդի՝ սփիւոֆ-հայրենիքի զանգուածներուն միջեւ:

Ունինք լաւագոյն զգացումներ՝ պատկանելի նախարարութեանդ կրթադաստիարակչական, հայրենական եւ ընկերային բազմերանգ նախաձեռնութեանց համար:


Ծաւալուն Ձեր նիգերուն՝ կը մաղթենք յարատեւ յաջողութիւն:

Բիր շնորհակալութիւն՝ հայ մշակին հանդէպ Ձեր ուշադրութեանը համար:

Մեր համեստ ներդրումներուն հմար Ձեր բարձր գնահատութեանց առիթով՝ կրկին շնորհակալութիւններ:

18 Յունիսի 2010

Ձերդ Յարգանօֆ՝



Կարօ Պետրոսեան  
Լոս Անջելես - Փալիֆորնիա

Ծանօթ:- Կրկնօրինակը՝ Հ.Հ. Լոս Անջելեսի Պատկանելի Հիւպատոսութեան: